

## Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հնագույն ժամանակներից մինչև XX դ. հայ ժողովուրդն օգտվել է ցամաքային ու ջրային փոխադրության զանազան միջոցներից: Արանցից հիմնականը փոխադրության ցամաքային միջոցներն էին իրենց հետիոտն, գրասաային (րարձկան և հեծկան) և շփկան (սահքային և անիվային) տարատեսակներով:

Հայկական լեռնաշխարհի բնակիչմայական, սոցիալ-անտեսական ու ռազմա-քաղաքական յուրահատուկ պայմաններում ուրույն անդ են գրավել հետիոտն փոխադրությունն ու հատկապես գրասաային փոխադրամիջոցները՝ իրենց հետ առնելով փոխադրասարքերի ու փոխադրության եղանակների հետ միասին, որոնց քննությանն էլ նվիրված է պատմա-ազգագրական ընթացիկ սույն աշխատությունը:

Դժվար է գերազնահատել փոխադրության և հաղորդակցության միջոցների նշանակությունը մարդկային հասարակության պատմության առաջընթացի բնագավառում: Պարզաբանելով փոխադրամիջոցների որոշակի դերը ժողովրդական տնտեսության մեջ, Կ. Մարքսն ընգծում է, որ րացի արդյունահանող արդյունաբերությունից, երկրագործությունից ու մշակող արդյունաբերությունից, գոյություն ունի նյութական արաադրության կարևորագույն մի շորորդ ճյուղ և՛ արանսպորային արդյունաբերությունը, որի արտադրանքը բեռներ և մարդիկ տեղափոխելն է՝ «Փոխադրանքի... առաջ բերած օգտակար էֆեկտն անմիջաբար շաղկապված է փոխադրապրոցեսի հետ, այսինքն՝ փոխադրանքի արդյունաբերության արաադրապրոցեսի հետ: Մարդիկ ու ալրանքները ճանապարհորդում են փոխադրամիջոցների հետ, և նրանց ճանապարհորդությունը, նրանց տեղից-տեղ շարժվելն է հենց այն արաադրապրոցեսը, որը կաաարվում է հիշյալ միջոցներով»<sup>1</sup>:

Նյութական մշակույթի այս կարևոր բնագավառի պատմա-ազգագրական ուսումնասիրությունը ունի առավելապես դիաու-ճանաչողական նշանակություն: Հայկական լեռնաշխարհը նյութական մշակույթի և հատկապես փոխադրամիջոցների ժագման ու զարգացման մակարդակի տեսակետից լինելով Առաջավոր Ասիայի կարեւոր երկրներից մեկը, գեոէս հնագույն ժամանակներից սկսած գարձավ նաև մինչև XIX դ. վերջերն ու XX սկզբները ժողովրդական անտեսության մեջ իրենց կենսունակությունը պահպանված գրասաային ու շփկան-անվային փոխադրամիջոցների բնօրրաններից մեկը: Հայտնի է, որ հնագույն փոխադրամիջոցների հնավայրերից առաջնային տեղ է գրավում Միջագետքը, ուր հնագիտական պեղումների շնորհիվ հայտնարերվել են գրասաային ու անիվավոր փոխադրամիջոցների հարուստ մնացորդներ<sup>2</sup>: Այս տեսակետից յուրահատուկ անդ են գրավում նաև Միջագետքին հարող Հայկական լեռնաշխարհն ու Անդրկովկասը, որտեղ հատկապես վերջին տասնամյակներում կատարված հնագիտական պեղումներն ու ուսումնասիրությունները տվեցին զգալի արդյունքներ<sup>3</sup>:

<sup>2</sup> См. Г. Чадлод, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956, стр. 230—237 и др.; Б. Б. Пиотровский, Н. Д. Флиттнер, История техники древнего Двуречья. Очерки по истории Древнего Востока, М.—Л., 1940; А. И. Тюменев, Государственное хозяйство древнего Шумера, М.—Л., 1956; Н. Д. Флиттнер, Культура и искусство Двуречья, М.—Л., 1958; С. Н. Крамер, История начинается в Шумере, М., 1965; L. Watelin, Excavations at Kish, IV, London, 1924.

<sup>3</sup> См. Б. Б. Пиотровский, Развитие скотоводства в древнейшем Закавказье, СА, XXIII, 1955; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, стр. 96—101; Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, стр. 139—196; Б. А. Куфтин, Археологические раскопки в Триаleti, Тбилиси, 1941, стр. 97—98; О. М. Джапаридзе, Архео-

<sup>1</sup> Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 2, Երևան, 1936, էջ 29.



Հայտնի է, որ ընչպես օտար, այնպես էլ հայ մատենագիրները առհասարակ հեռու են եղել ժո-  
ժովրդի նյութական մշակույթը ներկայացնելու  
նպատակադրումից: Այնուամենայնիվ, նրանց կրց-  
կա՞նք կամ հարևանցի վկայությունները որոշ հնա-  
րավորություն են ընձեռում ուրվագծելու փսխա-  
դրության կամ տեղափոխության հայ ժողովրդական  
միջոցների տնցյալի գոնե մոտավոր պատկերը՝  
Այս տեսակետից առանձնապես արժեքավոր աե-  
ղեկություններ են հաղորդում Քսենոֆոնը, Ասրա-  
բոնը, Տակիտոսը, Ք. Ջելերին, հայ մատենա-  
գիրներին՝ Եղիկ Կողբացին, Փավստոս Բուղանգը,  
Թովմա Արծրունին, Զաքարիա Քանաքեռցին, Ար-  
րահամ Կրեատացին և այլոք: Ժիշտ է, ինչպես հնաա-  
գա հնագիտական ու աղագրական, այնպես էլ  
տնտեսագիտական ու աշխարհագրական ընդլի-  
վում են նաև նման կարգի որոշ հարցեր<sup>4</sup>, սակայն  
որպես-աղագրական ուսումնասիրության առար-  
կա, այն դեռևս պատշաճ ուղադրության չի արժա-

նացել: Բավական է ասել, որ նույնիսկ այնպիսի  
պարբերականներ, ինչպիսիք էին «Ազգագրական  
հանդեսն» ու «Էմինյան ազգագրական ժողո-  
վածուն» չունեն ինչպես առհասարակ նյու-  
թական մշակույթի շատ ընագավառների, այնպես  
էլ հայ ժողովրդական փոխադրամիջոցներին նվիր-  
ված շատ թիվ քիչ աչքի ընկնող մի ուսումնասիրու-  
թյուն կամ նկարագրություն, չհաշված հաաու-  
կենա, բայց և արժեքավոր այն ակնարկները, որ  
արվում են այլ հարցերի կապակցությամբ:

Խոսելով տնցյալի փոխադրամիջոցների մա-  
սին, հարկ է նշել նաև, որ բացի լուծ գրասաային  
կամ լծկան անասուններից, պետք է նկատի ունե-  
նալ նաև այդ նույն նպատակին ծառայող այն  
բոլոր սարքերն ու հարմարանքները, բարձել-կա-  
պելու եղանակներն ու ձևերը, որոնք արգասիք էին  
մարդու աշխատանքային գործունեության և րս-  
անդժագործական հմտությունների: Դրանցից էին,  
ինչպես սահակը, սայլը, կաղը, լասան ու նա-  
վակը՝ իրենց տարաանակներով, այնպես էլ հա-  
մանների ու թամբերի բաղմազան անասկները,  
գյուղատնտեսական, շինարարական կամ կենցա-  
ղային դանաղան բեռներ կրելու բաղմապիսի հար-  
մարանքներն (քթոց, աիկ, խուրջին և այլն) ու  
սարքերը: Ազգագրական աուումով հարցի ու-  
սումնասիրության անմիջական նպատակն է՝  
պարզարանել նյութական մշակույթի այս ընագա-  
վառում հայ ժողովրդի ձեռք բերած փորձն ու  
հմտությունները, սովորություններն ու հավատա-  
լիքները, փոխադրության անհրաժեշտ և օժանդակ  
միջոցների ապարկելում՝ արհեստագործական ու  
դանաղան գրաղմունքների զարգացման մակար-  
դակը, և զրանով իսկ՝ ընգգծել փոխադրամիջոցների  
խաղացած գերն ու նրանց պատշաճ տեղը ժողովր-  
դական անասունության և կենցաղի աարբեր ոլորա-  
ներում: Այս և նման հարցերի, ինչպես նաև դանա-  
ղան փոխադրամիջոցների աարածվածության մո-  
աավոր սահմանների ու գրա օրինաչափության  
կամ լգատմանների, հարևան ժողովուրդների հետ  
մշակութային կապի և փոխադրությունների  
պարզարանումը միաթամանակ կնպաստի առա-  
ջիկայում հայ ժողովրդի նյութական մշակույթի  
այս ընագավառի պատմա-աղագրական աալասի  
ստեղծմանը:

логические раскопки в Трпалеин в 1957—1958 гг., Тби-  
лис, 1960, стр. 40—43; А. О. Мнацаканян, Древние  
повозки из курганов бронзового века на побережье  
оз. Севан, СА, 1960, № 2; С. А. Есаян, Из истории ко-  
лесного транспорта древней Арменни, «Историко-фило-  
логический журнал АН Арм. ССР», 1960, № 3; его же,  
Оружие и военное дело древней Арменни, Ереван, 1966,  
стр. 119—130; М. К. Гегешидзе, Грузинский народный  
транспорт, т. I, Сухопутные средства перевозки, Тби-  
лис, 1956 (на груз. яз., резюме на русск. яз.); К. Т.  
Каракашлы, Материальная культура азербайджанцев  
Северо-Восточной и Центральной зон Малого Кавказа,  
Баку, 1964, стр. 218—270; Т. А. Бунятов, Средства пе-  
редвижения в древнем Азербайджане, «Известия АН  
Азербайджанской ССР (серия общ. наук)», 1961, № 3;  
Ե. Լալայան, Դամբանների պեղումները Խորհրդային Հայաս-  
տանում, Երևան, 1931, Գ. Կալախանյան, Պ. Սաֆյան,  
Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970:

<sup>4</sup> Տե՛ս Լ. Ն. Պետրոսյան, Հայ ժողովրդական փոխադրա-  
միջոցներն ըստ մատենագրության, ՀՍՍՀ ԳԱ «Լրարեր հասա-  
րակական գիտությունների», 1968, № 9:

<sup>5</sup> Տե՛ս X. Լյուչ, Арменни, тт. I—II, Тифлис, 1910;  
И. Шопен, Исторический памятник состояния Армян-  
ской области в эпоху ее присоединения к Российской  
империи, СПб., 1862; А. М. Колобакин, Материалы для  
военно-статистического обозрения Азиатской Турции,  
тт. I—VIII, Тифлис, 1888—1891; М. А. Адоныч, Эконо-  
мическое развитие Восточной Арменни в XIX в., Ереван,  
1957; О. Е. Туманян, Экономическое развитие Арменни,  
т. I—II, Ереван, 1954—1956; Թ. Հակոբյան, Ուրվագծեր  
Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960,  
Ա. Օլսոնյան, Անոնյա տրանսպորտը նախասովետական Հա-  
յաստանում, Երևանի պետական համալսարանի գիտական  
աշխատություններ: Աշխարհագրական գիտությունների սերիա,  
պրակ 1, Երևան, 1954:

<sup>6</sup> Զ. Մալխասյան, Հայ գեղուկի ալրում, «Ազգագրական  
հանդես» (Կրճատ՝ ԱՀ), գիրք Գ, 1898, գիրք Զ, 1900:  
Ասուպետ, Եգի պաշտամունքը հին Հայաստանում, ԱՀ, գիրք  
23, 1912: Բեհեհ, Բուլանրի կամ Հարք գավառ, ԱՀ, գիրք Ե.,  
1899, գիրք Զ, 1900: Ս. Թառաշյան, Հայ ժողովրդի արհեստա-  
գործությունը, ԱՀ, գիրք Գ, 1898: Վ. Փափազյան, Հայ բոշաներ,  
ԱՀ, գիրք Գ և Դ, 1898:



Ներկա աշխատությունը մի փորձ է, որանդ հիմնականում քննության են առնվում տնտեսական կենցաղում հայ ժողովրդական փոխադրամիջոցների (ծի, էշ, ջորի, ուղտ և այլն) դերի, նրանց խնամքի և օգտագործման ասպարեզում գոյատևելիս սովորական սովորությունների ու հավատալիքների, ինչպես նաև այդ փոխադրամիջոցների հետ սերտորեն աղերսվող արհեստների ու զբաղմունքների՝ ազգագրական տեսակետից կարևոր նշանակություն ունեցող հարցերի ևս ամենայնի ընդգծվում է նաև տնտեսական կենցաղում այն հասուկ վերաբերմունքը, որ երկրագործ հայ ժողովուրդը ցուցաբերում էր անասնապահության այդ կարևորագույն բնագավառի՝ գրաստային փոխադրամիջոցների նկատմամբ։ Փոխադրամիջոցների համակարգը լրիվ ներկայացնելու նպատակով, ընդհանուր գծերով ընդամենը վերջին տրանսպորտային ամենանախնական միջոցի՝ հետիոտն անդամության, փոխադրության և այդ նպատակին ծառայող օժանդակ միջոցների հետ կապված զանազան զբաղմունքների ու արհեստների մոտավոր պատկերը։ Չնայած ունամանները դասվում են ժողովրդական ասարակ կարգը, այնուամենայնիվ, նկատի ունենալով զրանց նախնական սուտ գործնական նշանակությունը, սույն շարադրանքում դրանց որոշ մասը (տրեխ, լական, հետիկ, խարուկ և այլն) դիտվում են նաև որպես փոխադրամիջոցների ուրույն տարատեսակներ։

Նախքան վերոհիշյալ հարցերի քննությանն անցնելը անհրաժեշտ է համառոտակի ընդամենը Հայկական լեռնաշխարհի բնակչության պայմաններն ու տեղանքին յուրահատուկ հաղորդակցության երթուղիները։ Հայկական լեռնաշխարհում անցնող հատկապես տարանցիկ ճանապարհների տեղադրության և հարակից այլ հարցերի քննությանն անհրաժեշտ են հայ և օտարազգի անվանի գիտնականներ (Հ. Մանանդյան, Ն. Ագոնց, Ղ. Ալիշան, Լեո, Կ. Միլլեր, Զ. Մարկվարտ, Հ. Հյուրըշ-

ման, Վ. Բյուք, Ս. Երեմյան, Բ. Հակոբյան և ուրիշներ)։ Այս հարցերի պարզաբանման գործում մեծ է մասնավորապես Հ. Մանանդյանի վաստակը։ Ներկայացվող ակնարկում, հենվելով եղած ուսումնասիրությունների և նյութերի վրա, ցույց է տրվում, որ չնայած երկրի բնակչության անբարենպաստ պայմաններին, լեռնաշխարհի բնակիչները, ելնելով իրենց երկրամասի ընձեռած հնարավորություններից, կարողացել էին կատարել ինչպես կենդանի ուժի (գրաստային փոխադրամիջոցների), այնպես էլ երթուղիների ճիշտ ընա-րություն։

Ժամանակագրական անսակետից սահմանափակվելով հիմնականում XIX դ. և XX դ. սկզբներին վերաբերող պատմա-ազգագրական և ազգապական դաշապին նյութերի քննությամբ, աշխատության մեջ օգտագործվել են ինչպես հնագիտական, վիճակագրական<sup>8</sup>, մատենագրական ու բանահյուսական, այնպես էլ արխիվային ու վիճակագրական նյութեր<sup>9</sup>։ Աշխատության մեջ բացահայտված հնարավորություններն ու լեռնաշխարհի մեջ ընդգրկված բնակչության ժողովուրդներին վերաբերող հնագիտական նյութերը, այնպես էլ օտարազգի մատենագիրների կամ ճանապարհորդների վկայություններն ու դիտողությունները։ Հայ ժողովրդական գյուցազնավեպի և բանահյուսական այլ նյութերի (հեքիաթներ, ավանդություններ, ասացվածքներ, հանելուկներ և այլն) հետ մեկտեղ, աշխատության մեջ վկայակոչված են նաև հարե-վան այլ ժողովուրդների և հատկապես հին արե-վելյան կամ շումերական հուշակավոր «Գիլգամեշ», հունական «Իլիական» և պարսկական «Ռուստամ և Առհրար» դյուցազնավեպերում տեղ գտած և պատմա-ազգագրական տեսակետից մեծ արժեք ներկայացնող համապատասխան նյութեր։ Տեղին է նշել նաև այն ուշագրավ երևույթը, որ ինչպես

<sup>8</sup> Տե՛ս Ս. Զալալյան, ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տփլիս, 1842; Ս. Բաղդասարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963; Հ. Ս. Օրբելի. Անի քաղաքի Դիվան հայ վիճակագրության, պրակ 1, Երևան, 1966:

<sup>9</sup> Տե՛ս «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936; «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. I—VI, IX, Երևան, 1959—1963; Ա. Ղաճախյան, Առաժանի, Երևան, 1960; Նույնի՝ Ավանգապատմ, Երևան, 1965; Ա. Մալալյան, Հայ միջնադարյան գրույցներ, Երևան, 1969; Район Тифлисско-Карсско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях, Тифлис, 1897; Обзор Эриванской губернии за 1898 г., Тифлис, 1900; Памятная книжка Эриванской губернии за 1914 г., Тифлис, 1914; Н. Спаский, Сельскохозяйственно-статистические сведения об Эриванской губернии за 1870 год, М., 1972; И. Шопен-хиз. աշխ. А. Колубакин, նշվ. աշխ.:

<sup>7</sup> Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, (տե՛ս նաև զբաղմունքի ցանկ, էջ 224—231)։ Նույնի Հին Հայաստանի ճանապարհները, «Տեղեկագիր փոխությունների և արվեստի ինստիտուտի», Երևան, 1931, № 5; Մանր հետազոտություններ, Երևան, 1932: О торговле в городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XV в. н. э.), Ереван, 1954; Н. Аюонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908; С. Т. Еремян, Торговые пути Юго-Кавказа в конце IV века, քարտեզ՝ հրատարակված ձեռագրի իրավունքով։ Նույնի՝ Торговые пути Закавказья, «Вестник древней истории», 1939, № 1; Հայաստանի ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1961; Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960:



քաղաքակրթության հնագույն ժամանակներն (մ. թ. ա. 3-րդ հազ. վերջ և 2-րդ հազ. սկիզբ) արտացոլող «Գիլգամեշ» գլուցազնավեպի, այնպես էլ շումերական դրավոր (սեպպիր) հերոսապատում այլ առքերի մեջ նեֆկայտցվող իրագարծություններն իրենց վազեմիսիթյամբ համարյա չեն զիջում հնագիտական պեզածո նյութերին: Այդ վկայությունները միաժամանակ հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ մեր թվագրությունից առաջ 3-րդ հազարամյակի վերջերին և 2-րդ հազարամյակի սկզբներին Միջագետքում գեոնս գրաստային առաջնակարգ փոխազդամիջոց էր համարվում էլը, իսկ ձին ու, ընականարար նաև, ջուրի տակավին լայն տարածում չէին գտել: Ահա ինչու, ի տարբերություն «գաշտային» կամ «տափաստանային» սովորական էջից, Միջագետքում ձին կոչվում էր «լեոնային երկրի էջ» կամ «ուզգակի լեոնային էջ»<sup>10</sup>: Չնայած արգեն 2-րդ հազարամյակի կեսերից աստիճանարար զարգացող ձիարություններ, ինչպես Միջագետքի, այնպես էլ հին արևելյան քաղաքակիրթ մի շարք երկրների համար ձիամատակարարման հնագույն և առաջնակարգ երկրամասեր էին համարվում Հայկական լեռնաշխարհն ու Իրանի սարահարթը<sup>11</sup>: Եվ պատահական չպետք է համարել այն, որ Հայկական լեռնաշխարհին վերաբերող ինչպես հնագիտական, այնպես էլ մատենագրական ու պատմա-ազգագրական ազդյունները առավել հարուստ նյութեր են պարունակում գրաստային անասուններից հատկապես ձիու մասին, որը կարելի է բացարեկ նաև տնտեսական կենցաղում նրա ունեցած զգալի գերով: Փոխադրության այդ միջոցն առանձնապես ծառայել է բարձր խավին, ինչպես նաև ռազմական նպատակների ու արքունական շքահանգեանների կազմակերպմանը:

Ընդհանրապես անցյալի տնտեսական կենցաղի ու նյութական մշակույթի, ինչպես նաև փոխադրամիջոցների մասին ամրագրական պակերացում կազմելու համար, բացի հնագիտական, մատենագրական ու պատմա-ազգագրական նյութերից, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև ժամա-

նակակից կենցաղում որպես վերապրուկ դեռևս գոյատևող կամ վերհուշի ձևով պահպանված ազգագրական գաշտային նյութերը, որոնք և կազմում են սույն շարագրանքի հիմնական առաջը:

Սույն շարագրանքում շրջանառության մեջ գրված ազգագրական գաշտային նյութերը հեղինակի կողմից հավաքվել են 1960-ական թվականներին ՀՍՄՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից Հայկական ՍՍՀ շրջաններ և Անգրկովկասի ու Հյուսիսային Կովկասի հայաշատ այլ վայրեր կազմակերպված խմբակային կամ անհատական գիտարշավների ժամանակ: Արևմտյան Հայաստանի վերաբերյալ եզած գրավոր նյութերի<sup>12</sup> պակասը հնարավորին չափ լրացվել է XIX դ. վերջում և XX դ. սկզբներին Արևելյան Հայաստան և առհասարակ Կովկաս ներգաղթած հայ զանգվածների շրջանում կատարած ազգագրական պրոպտումների միջոցով: Այսպես, Բարձր Հայքի պատմա-ազգագրական շրջանի վերաբերյալ գաշտային նյութեր հավաքվել են հիմնականում Լենինական քաղաքում, Շիրակի գյուղերում, Վրացական ՍՍՀ Սխալքալաքի, Ախալցխայի, Բոգդանովկայի շրջաններում (Ջավախքի պատմա-ազգագրական շրջան) և այլուր: Համընցիների (պոնտահայերի) մասին նյութեր են հավաքվել Սոխազական ԻՍՍՀ և Կրասնոդարի երկրամասի Սեծովի առափնյա շրջանների հայաբնակ գյուղերում, Մուջի և Սասունի վերաբերյալ՝ ՀՍՄՀ Սպիտակի, Աշտարակի, Թալինի, Ղուկասյանի և այլ շրջաններում, Վանա լճի ավազանի և Խոյ-Սալմաստի վերաբերյալ՝ ՀՍՄՀ Արտաշատի, Հոկտեմբերյանի, Ադիգրեկովի ու Եզեզնաձորի և այլ շրջաններում: Առհասարակ պատմա-ազգագրական առնակներից և ավյալ գեպքում քննարկվող թեմայի առումով արժեքավոր նյութեր են պարունակում նաև Արևմտյան Հայաստան գաղթած, ինչպես նաև՝ ՀՍՄՀ զանազան շրջանների անգարնիկ գրասերների հազորգումները, որոնք պահպանվում են հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվում<sup>13</sup>:

<sup>10</sup> Ed. Meyer, Geschichte des Altertums, I, Berlin 1927, էջ 651. С. Н. Крамер, *Уст. арх.*, 1965, էջ 30—39, և. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 2-րդ, Երևան, 1941, էջ 268:

<sup>11</sup> И. М. Дьяконов, Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 гг. до н. э. Хурриты, лувийцы, протоармяне, Ереван, 1968, стр. 41—44; И. М. Дьяконов, Г. Ф. Ильин, Роль коневодства в хозяйстве и военной технике, «Всемирная история», т. I, М., 1956, էջ 262.

<sup>12</sup> Տե՛ս Ե. Բախաբեկյան, Ոսկեդարակ, հատ. 1—2, Բեյրութ, 1946: Վսե՛ն Հայկ, Խարրերդ և անոր ոսկեզնն գաշտ, Նյու-Յորք, 1959: Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ Կեսարիո, հատ. 1—2, Կահիրե: Ակն և ակնեցիք, Փարիզ, 1952, Զեյրունցի, Զեյթունի անցյալն ու ներկայն, Վիեննա, 1900: Ե. Կարապետյան, Սասուն, Ազգագրական նյութեր, Երևան, 1963: Վ. Պետոյան, Սասն ազգագրությունը, Երևան, 1965: Մ. Միքայելյան, Նկարագրական ուղեգրություն ի հայաբնակ դավառ արևելյան Տաճկաստանի, Կ. Պոլիս, 1834, և այլն:

<sup>13</sup> Տե՛ս շրջափվող թեմայի վերաբերյալ ազգագրական



Ազգադրական դաշտային նյութերի հավաքումն ու դրանցումը հեղինակը կատարել է ինչպես անձնական գիտումների և զննումների, այնպես էլ տարեց արհեստավորների և երկրագործ կամ անասնապահ գյուղացիների հետ ունեցած դրույթների սիշոցով<sup>14</sup>։ Դաշտային հետազոտությունների ընթացքում նա ուշադրություն է դարձրել ոչ միայն տվյալ ժամանակ զոյություն ունեցող փոխադրամիշոցների և դրանց հետ կապված դործող արհեստների ու զրազմունքների, սովորությունների ու հավատալիքների խնդիրն, այլև ջանացել է հնարավորին չափ պարզարանել, նկարագրել ու ընդթագրել արգեն գրեթե անհետացած մի շարք արհեստներ ու զրազմունքներ, սովորություններ ու հավատալիքներ<sup>15</sup>։

առանձնապես արժեքավոր տեղեկություններ հաղորդած արհեստավորների կամ բանասացների ցուցակը՝ վերջում։

<sup>14</sup> Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ, Լ. Ն. Պետրոսյան, Ազգադրական դաշտային նյութեր, № 1—7։

<sup>15</sup> Տե՛ս Լ. Ն. Պետրոսյան, էջեր Հայաստանի փոխադրա-

Պատմա-ազգագրական և ազգագրական դաշտային նյութերն առավել շոշափելի դարձնելու նպատակով, շարագրանքի հետ միաժամանակ ներկայացվում են համապատասխան զծանկարներ ու լուսանկարներ, որոնց մեծամասնությունը կաարվել են գիտարշավների ընթացքում<sup>16</sup>։ Օգտագործվել են առավելապես ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի, ինչպես նաև՝ Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնի արխիվների լուսանկարներ։

միշոցների պատմությունից, «Պատմա-բանասիրական հանգես», 1966, № 3։ Նույնի՝ Հաղորդակցության ազանչանային կամ պայմանական միշոցները հայերի մեջ, «Պատմա-բանասիրական հանգես», 1968, № 3, Նույնի՝ Армянские надодные сухопутные средства передвижения, «Кавказский этнографический сборник, том V, М., 1971.

<sup>16</sup> Ինչպես դաշտային նյութերի, այնպես էլ զծանկարների և թանգարանային ցուցանմուշների լուսանկարները կատարվել են ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի լուսանկարչական աշխատանոցում՝ Գր. Ժամկոչյանի կողմից։